

## **ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԲԱՐԵՎ ԵՐԵՎԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1 «Բարև Երևան» խմբակցությունը ստեղծվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև՝ «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի» 43-րդ կետի համապատասխան՝ հիմք ընդունելով Երևանի ավագանու՝ 2013 թվականի մայիսի 6-ի ընտրությունների արդյունքները, և 2013 թվականի հունիսի 8-ից գործում է Երևան քաղաքի երկրորդ գումարման ավագանիում:
- 1.2 Խմբակցության նպատակն է «Բարև Երևան» դաշինքը կազմող կուսակցությունների և համամասնական ցուցակում ընդգրկված անկուսակցական անձանց կողմից ընդունված նախընտրական ծրագրում ամրագրված սկզբունքներին և ուղենիշներին համապատասխան՝ իրականացնել դաշինքի ծրագրային լուծումների կյանքի կոչմանն ուղղված օրենսդրական և այլ գործունեություն:
- 1.3 Խմբակցությունը հավատարիմ է «Բարև Երևան» դաշինքի 2013 թվականի նախընտրական ծրագրում ամրագրված սկզբունքներին: Ծրագրում ընդգրկված որևէ հարցի կամ խնդրի վերաբերյալ խմբակցության հավաքական կամ խմբակցության անդամի անհատական դիրքորոշումները չեն կարող հակասել Դաշինքի ծրագրային լուծումներին: Եթե տվյալ խնդիրը կամ դրա լուծումը հստակ արտացոլված չէ դաշինքի ծրագրում, ապա դիրքորոշումը ձևավորվում է խմբակցության ներսում քննարկումների և դրա հիմնա վրա կայացվող որոշումների միջոցով:
- 1.4 Խմբակցությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներին, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:
- 1.5 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերին, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 45, 46, 47 կետերին համապատասխան՝
  - ա) ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին,
  - բ) խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից, և վերականգնվում է, եթե նրա կազմում ընդգրկվում է դրա իրավասությունն ունեցող ավագանու առնվազն մեկ անդամ,

զ) խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարեցման և վերականգնման մասին գրավոր տեղեկացվում է քաղաքապետը կամ ավագանու նիստը վարողը, որն այդ մասին հայտարարում է ավագանու առաջիկա նիստում:

## 2. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

- 2.1 Խմբակցությունն իր աշխատանքները կազմակերպում է հերթական նիստերի միջոցով:
- 2.2 Խմբակցության առաջին նիստում խմբակցության անդամներն իրենց կազմից ընտրում են խմբակցության ղեկավար և քարտուղար մինչև 1 տարի ժամանակահատվածով: Նրանց լիազորությունների ավարտին հաջորդող ամսվա առաջին կեսում խմբակցությունն ընտրում է նոր ղեկավար և քարտուղար, եթե մինչև այդ խմբակցությունը որոշում չի ընդունել նախկին ղեկավարի և քարտուղարի լիազորությունները վաղաժամկետ դադարացնելու կամ երկարաձգելու մասին: Խմբակցության ղեկավարի և քարտուղարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման որոշման դեպքում նոր ղեկավարը և քարտուղարը ընտրվում են 10-օրյա ժամկետում, իսկ լիազորությունների 1-ամյա ժամանակահատվածը հաշվարկվում է արտահերթ ընտրության օրվանից սկսած: Սույն մասում թվարկված բոլոր որոշումներն ընդունվում են փակ, գաղտնի քվեարկությամբ: Ավագանու հանձնաժողովներում նախագահի պաշտոն զբաղեցնողները խմբակցության ղեկավարի հավակնորդների մեջ չեն մտնում:
- 2.3 Խմբակցության նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
- 2.4 Խմբակցության որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ:
- 2.5 Խմբակցության հերթական նիստերը տեղի են ունենում յուրաքանչյուր երկուշաբթի, իսկ ավագանու հերթական կամ արտահերթ նիստերի օրերին՝ դրանցից առնվազն 1 ժամ առաջ:
- 2.6 Խմբակցության արտահերթ նիստը գումարվում է խմբակցության ղեկավարի կամ անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում: Խմբակցության արտահերթ նիստ գումարելու նախաձեռնության վերաբերյալ խմբակցության անդամները անհապաղ տեղեկացվում են:
- 2.7 Խմբակցության նիստերին, բացի խմբակցության անդամներից, կարող են մասնակցել քննարկման ենթակա հարցերին իրազեկ, խմբակցության որոշմամբ հրավիրված անձինք և խմբակցության փորձագետները:
- 2.8 Խմբակցության յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է ստանձնում Երևանի երկու վարչական շրջանների խնդիրներին հետևելու, դրանք խմբակցության և ավագանու նիստերում բարձրաձայնելու ու լուծմանը հետամուտ լինելու համար: Երևանի վարչական շրջանների համար ավագանու անդամների պատասխանատվությունները սահմանվում են խմբակցության որոշմամբ:

### 3. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Խմբակցության ղեկավարը.

- 3.1 համակարգում է խմբակցության գործունեությունը,
- 3.2 ապահովում է առողջ աշխատանքային մթնոլորտ խմբակցության ներսում,
- 3.3 նախապատրաստում և վարում է խմբակցության նիստերը,
- 3.4 կազմում և խմբակցության հաստատմանն է ներկայացնում խմբակցության նիստերի օրակարգի նախագծերը,
- 3.4 ընթացք է տալիս և պատասխանում է խմբակցության անունով ստացված դիմումներին և բողոքներին,
- 3.5 ըստ Երևանի վարչական շրջանների պատասխանատուների՝ վերահասցեագրում է խմբակցության ստացած գրությունները և նամակները,
- 3.6 վարում է շրջանառության մեջ դրվող փաստաթղթերի, գրությունների, օրենսդրական նախաձեռնությունների ռեեստրը, խմբակցության նիստերում առնվազն ամիսը մեկ պարբերականությամբ հաշվետվություն է ներկայացնում ընթացքի մեջ գտնվող, լուծման/պատասխանի արժանացած կամ լուծում/պատասխան չստացած գրությունների, նամակների մասին, իսկ լիազորությունների ավարտին ամփոփիչ հաշվետվություն է ներկայացնում խմբակցության նիստում,
- 3.7 գումարում է խմբակցության արտահերթ նիստ,
- 3.8 ստորագրում է խմբակցության որոշումները, վերահսկում է խմբակցության որոշումների և հանձնարարականների կատարման ընթացքը,
- 3.9 քարտուղարի հետ միասին համակարգում է խմբակցության գործավարի և փորձագետների աշխատանքը,
- 3.10 ներկայացնում է խմբակցությունը պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, Երևանի ավագանու խմբակցությունների, զանգվածային լրատվության միջոցների, խմբակցության գործունեության հետ առնչվող այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

### 4. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒԴԱՐԸ

Խմբակցության քարտուղարը.

- 4.1 փոխարինում է խմբակցության ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ,
- 4.2 մասնակցում է խմբակցության հերթական նիստի, օրակարգի նախագծի մշակմանը,
- 4.3 վերահսկում է խմբակցության գործավարությունը,
- 4.4 ապահովում է խմբակցություն մուտք արվող, վերահասցեագրվող և ելից գրությունների շրջանառությունը,
- 4.5 ապահովում է խմբակցության կապը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների և վարչական շրջանների աշխատակազմերի հետ,

- 4.6 խմբակցության նիստում ներկայացնում է ամփոփ հաշվետվություն նախորդ նիստի ժամանակ ստացված հանձնարարականների կատարման ընթացքի և խմբակցության պատգամավորներին հղած դիմումների վերաբերյալ, ինչպես նաև՝ խմբակցության նիստում ամփոփիչ հաշվետվություն է ներկայացնում իր լիազորությունների ավարտին,
- 4.7 վերահսկում է խմբակցության անդամներին անհրաժեշտ նախագծերով ու փաստաթղթերով ապահովումը,
- 4.8 հետևում է խմբակցության աշխատակազմի անդամների պարտականությունների կատարմանը,
- 4.9 վարում է խմբակցության աշխատակազմի ամենօրյա հաշվառումը,
- 4.10 կազմակերպում է խմբակցության պահոցի պահպանման աշխատանքները:

## **5. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ**

Խմբակցության անդամը.

- 5.1 պարտավոր է մասնակցել խմբակցության աշխատանքներին, ներկայանալ խմբակցության նիստերին: Խմբակցության նիստին մասնակցելու անհնարինության մասին խմբակցության անդամը նախապես տեղեկացնում է խմբակցության ղեկավարին կամ քարտուղարին,
- 5.2 պարտավոր է կատարել խմբակցության որոշումները,
- 5.3 իրավունք ունի հաշվետվություն պահանջել խմբակցության գործունեության մասին,
- 5.4 հայտնում է իր դիրքորոշումը խմբակցության նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ:

## **6. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՒ ՓՈՓՈԽՈՒՄԸ**

- 6.1 Խմբակցության կանոնադրությունն ընդունվում է, ինչպես նաև դրանում փոփոխությունները կատարվում են խմբակցության ղեկավարի կամ անդամի առաջարկությամբ՝ խմբակցության որոշմամբ:
- 6.2 Խմբակցության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները խմբակցության նիստում քննարկվում են արտահերթ:

«Բարև Երևան» խմբակցության ղեկավար՝

Անահիտ Բախշյան